Հավելված

Սևան համայնքի՝ 2017-2021թթ. 5-ամյա զարգացման ծրագրի

<u>Բաղադրիչ - Աղետների ռիսկերի կառավարում և նվազեցում</u>

- Իրավիճակի նկարագրություն

Սևան համայնքի ռելիեֆը հիմնականում հարթ է, կտրտված հեղեղատներով: Միջին բացարձակ բարձրություններն են 1900-1950մ: Արձանագրվում է գրունտային ջրերի բարձր մակարդակ, թույլ անկայուն կարբոնատային ավազների առկայություն, մակերեսային հոսքեր: Տարածված են լճային կարբոնատային ավազներ, կավեր, ավազակավեր, խճեր: Սեյսմիկ վտանգի մակարդակը գնահատվում է 0.3g-ով:

Սևան քաղաքը հիմնականում կոյուղացված է: Կոյուղու համակարգում կառուցված 3 պոմպակայանների միջոցով և ինքնահոս եղանակով կոյուղաջրերը հեռացվում են Հրազդան փողոց՝ Սևան-Գեղամավան կոյուղու կոլեկտոր, որն ուղղվում է Գեղամավանում նախագծվող կենցաղային կոյուղաջրերի մաքրման կայան:

Կոյուղու համակարգը բացակայում է Ցամաքաբերդ թաղամասում, Գոմաձոր թաղամասի մի մասում, Գագարինում: Այն հատվածներում, որտեղ բացակայում է այս համակարգը, կոյուղացումն իրականացվում է բակային ներծծման հորերով, որը լուրջ վտանգ է պարունակում շրջապատի սանիտարական վիճակի համար:

Սևան քաղաքի համար սանիտարահիգիենիկ պատշաճ մակարդակ ապահովելու նախապայմաններից է հեղեղատար կոյուղու առկայությունը, որը համայնքի տարածքից հեռացնելու է անձրևաջրերը և հալոցքից առաջացած ջրերը:

Ներկայումս Սևան քաղաքում հեղեղատար կոյուղի գործում է երկու հատվածում՝ Նաիրյան և Նալբանդյան փողոցներ՝ իրենց հարակից տարածքներով, որտեղից հավաքված ջրերը ուղղվում են Հրազդան գետ: 2-րդ հատվածը ընդգրկում է քաղաքի միկրոթաղամասերի մի մասը, որտեղից հավաքված ջրերը լցվում են հողի մակերևույթ:

Հեղեղատար ջրերը սելաֆատար լցվելուց առաջ պետք է անցնեն մեխանիկական մաքրում:

Սևան համայնքում հեղեղավտանգ և սելավավտանգ հատված է Գոմաձոր թաղամասի Խորհուրդների փողոցը, որտեղ առկա է անցյալ դարի 80-ական թվականներին կառուցված սելավատար: Շահագործման տարիներին մաքրման ընթացիկ աշխատանքներ չեն կատարվել, և ներկայումս սելավատարը գրեթե չի գործում:

Խորհուրդների փողոցի սելավատարի և հեղեղատարի տեխնիկական վիճակն ուսումնասիրվել է և պարզվել է, որ այն ենթակա է ողջ երկայնքով մաքրման, սակայն անհրաժեշտ տեխնիկայի /հատուկ այդ պայմաններում աշխատող/ բացակայության պատճառով հնարավոր չէ խնդրին լուծում տալ:

Սողանքավտանգ և քարաթափվող հատված է համայնքի Ցամաքաբերդ թաղամասի Գայի փողոցի հարակից տարածքը՝ դեպի «Ախթամար» հյուրանոցային համալիր բարձրացող հատվածը: Գայի փողոցի լայնական հատվածում՝ «Մաշտոցներ» կոչվող տեղամասում, նախկինում տեղադրվել են սելավատար խողովակներ, որոնց միջոցով հալոցքից և անձրևից գոյացած ջրերը հեռացվում են դեպի անտառածածկ տարածք: Դրանք ևս կարիք ունեն մաքրման, իսկ հնարավորության դեպքում, նաև նորերով փոխարինման:

Հիշյալ հատվածում առկա է նաև քարաթափման և սողանքների վտանգ: Գայի փողոցի հետագա անվտանգ շահագործման համար անհրաժեշտ է սողանքների վայրում կառուցել հենապատ:

Ավտոմոբիլային տրանսպորտը արտանետում է ավելի քան 200 վնասակար նյութեր, որոնցից ամենազանգվածայինն ու վտանգավորն են՝ ածխածնի մոնօքսիդը /CO/, ազոտի օքսիդները /NOx/, աշխաջրերը /CmHn/ և կոշտ նյութերը:

Սևան համայնքի շրջակա միջավայրի վրա տեխնածին ազդեցության հիմնական գործոններն են՝

մթնոլորտային օդի աղտոտումը

մակերևութային ջրերի աղտոտումը

շրջակա միջավայրի աղտոտումը

տրանսպորտի աղմուկը

- Բնակլիմայական պայմաններ

Ձմռանը ցուրտ է, գերիշխում է թույլ սառնամանիքային անհողմ եղանակ /օդի միջին ջերմաստիճանը՝ մինուս 2.5 - մինուս 12.5 աստիճան/: Ձյան ծածկույթը ձևավորվում է նոյեմբերի 3-րդ տասնօրյակից, հաստատուն և կայուն ծածկույթը՝ դեկտեմբերին, որի միջին բարձրությունը հունվար-փետրվար ամիսներին հասնում է 25-35սմ, իսկ ափամերձ գոտում՝ 10-20սմ:

Ձմռանը քամիները հիմնականում ուղղված են դեպի լճի կենտրոնը: Զգալի սառնամանիքային եղանակ /-15.5-ից -22.5 աստիճան/ լինում է հազվադեպ՝ ամսական 3-5 օր, որի պատճառը հզոր օդային զանգվածների լեռնային արգելքի հաղթահարումն ու թափանցումը:

Ամռանը գերակշռում է «արևոտ չափավոր խոնավ» եղանակային տիպը՝ նվազագույն տեղումների քանակով, որն ուղեկցվում է նաև ամպրոպային երևույթներով:

Քամիները բացասաբար են անդրադառնում օրգանիզմի ջերմազգացողության վրա:

Սևան քաղաքի տարածքում ֆիզիկա-երկրաբանական պրոցեսները համեմատաբար թույլ են արտահայտված.

1. մակերևութային հողմնահարման-քայքայման երևույթներ՝ հանդարտ և թույլ.

2. ջրա-էռոզիոն քայքայման երևույթներ՝ թույլ /սելավային հուներով «ժամանակավոր ջրահոսքով և ձորակներով»/.

3. սողանքային երևույթներ՝ թույլ. թեք լանջերին և ճանապարհների կողքերի նկատվում են քարաթափեր:

Ռելիեֆագոյացման և տեսքի փոփոխման վրա մեծ ազդեցություն ունի տեխնոգեն երևույթները՝ լանջերի կտրում, փորվածքներ, շինարարական աղբի կուտակումներ:

Սպառնացող վտանգներ

Երկրաշարժ, կարկտահարություն, ուժեղ քամի, ցրտահարություն, ձնաբուք, առատ ձյուն, արևահարում, երկաթուղային վթար, վարակիչ հիվանդություններ

Ոլորտ

Աղետների ռիսկերի կառավարում

նպատակներ -

- ✓ Աղետների, ռիսկերի կառավարմանը և զարգացմանն ուղղված միջոցառումների իրականացում.
- ✓ Համայնքի սեյսմիկ ռիսկերի գնահատում.
- ✓ Իրազեկման գործընթացի ապահովում.

Առանցքային ցուցանիշներ	Թիրախային արժեք						
	-	-	2017	2018	2019	2020	2021
Համայնքում սելավների, քարաթափումների կանխարգելման, հետևանքների նվազեցման և վերացման միջոցառումների իրականացում	-	-	-	50%	55%	60%	700%
Վերապատրաստման դասընթացների մասնակցություն			10%	15%	20%	25%	30%
Իրազեկման գործընթացի ապահովում			50%	60%	65%	70%	75%
Շենքերի սեյսմակայունության ապահովում			20%	25%	30%	35%	50%

Նախատեսվող ծրագրեր

1. **Համայնքի ջրամատակարարման համակարգի ցանցի նոր և վերակառուցվող տեղամասերի վրա հակահրդեհային հիդրանտների /ջրածորանների/ տեղադրում, համայնքի տարածքով անցնող գետի վրա հրշեջ կառամատույցների կառուցում**

Արդյունք - Հիմնանորոգված ևս հինգ փողոցների առկայություն՝ ճանապարհային նշանների տեղադրմամբ: Լուծված են բարեկարգման աշխատանքները, իրականացված անվտանգ երթևեկության պահպանումը:

2. **Սևան համայնքի սեյսմիկ ռիսկի գնահատման տեխնիկական առաջադրանքի մշակում**

Արդյունք – առկա է հաստատված և ՀՀ ԱԻՆ-ի կողմից համաձայնեցված Սևան համայնքի սեյսմիկ ռիսկի գնահատման տեխնիկական առաջադրանք

3. **Նախադպրոցական և արտադպրոցական հիմնարկների շենքերի սեյսմակայունությանն ու ամրացմանն ուղղված աշխատանքների իրականացում**

Արդյունք – առկա են սեյսմակայուն և ամրացված շենքեր

4. **Սևան քաղաքի Խորհուրդների փողոցի սելավատարի և հեղեղատարի մաքրում**

Արդյունք – մաքրված սելավատարի և գործող հեղեղատարի առկայություն

5. **Ցամաքաբերդ թաղամասի Գայի փողոցի հարակից տարածքի սողանքավտանգ և քարաթափվող հատվածի մաքրում, պատնեշի կառուցում**

Արդյունք – առկա է մաքրված հատված, կառուցված է պատնեշ

6. **Վերապատրաստման դասընթացների անցկացում**

Արդյունք – վերապատրաստված համայնքապետարանի և նախադպրոցական ուսումնական հաստատությունների աշխատակիցներ

7. **Իրազեկման աշխատանքների իրականացում**

Արդյունք – Նախադպրոցական ուսումնական հաստատություններում թեմատիկ բաց պարապմունքների անցկացում, մասնագիտական գրականության առկայություն, տեղեկատվական ցանցի գործարկում

Սևան համայնքի
Աղետների ռիսկի նվազեցմանն ուղղված միջոցառումներ
2019-2021թթ.

Հ/հ	Միջոցառման անվանումը	Վայրը	Մասնակիցներ	Հիմնական արդյունքներ	Պատասխանատու
1	Աղետների վերաբերյալ կրթական նյութերի պատրաստում և աղետների կառավարման վերաբերյալ կրթության խթանում	համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատություններ	մանկապարտեզների տնօրեններ, դաստիարակներ	արտակարգ իրավիճակներում վարքականոնների իմացություն, իրազեկվածության բարձրացում	
2	Նախադպրոցական հաստատությունների դաստիարակների, վարչական անձնակազմի վերապատրաստում	Երևան	դաստիարակներ	վերապատրաստված անձնակազմի առկայություն	ՆՈՒՀ-երի տնօրեններ, համայնքապետարանի աշխատակազմի ԿՄՄԵՀ բաժին
3	Նախադպրոցական ուսումնական հաստատություններում տարբեր տարիքային խմբերում ԱՌԿ-ի վերաբերյալ պարապմունքների անցկացում	համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատություններ	3-6 տարեկան երեխաներ	ըստ տարիքային խմբերի՝ երեխաները ունեն նվազագույն գիտելիքներ աղետների ռիսկի կառավարման վերաբերյալ	ՆՈՒՀ-երի տնօրեններ, դաստիարակներ
4	Նախադպրոցական ուսումնական հաստատության շենքերում նախազգուշական, կողմնորոշող նշանների առկայություն	համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատություններ	ՆՈՒՀ-երի աշխատակիցներ, երեխաներ, ծնողներ	շենքերում առկա է անհրաժեշտ կողմնորոշող նշաններ	ՆՈՒՀ-երի տնօրեններ, համայնքապետարանի աշխատակազմի ԿՄՄԵՀ բաժին
5	Ապահովել բնակչության, դպրոցների, և այլ կազմակերպությունների ներգրավվումը արտակարգ իրավիճակների կանխման և դրանց հետևանքների վերացման միջոցառումների նախապատրաստմանը և իրականացմանը	համայնք	համայնքի բնակիչներ, հաստատությունների, կազմակերպությունների աշխատակիցներ	ապահովվել է բնակչության անվտանգությունը, բարձրացվել են դիմակայունությունը	ԱՌԿ խորհուրդ
6	Հակահրդեհային կանոնների պահպանման համար հսկողության սահմանում	ՀՈԱԿ-ների տնօրեններ, Սևան համայնքի աղետների ռիսկի կառավարման խորհուրդ	ՀՈԱԿ-ներ, հաստատություններ, կազմակերպություններ	պահպանվել են հակահրդեհային կանոնները	Սևանի թիվ 33 հրշեջ-փրկարարական ջոկատ, ԱՌԿ խորհուրդ
7	Հրդեհային պաշտպանության ապահովում	համայնքապետարան, համայնքային ոչ առևտրային կազմակերպություններ,	համայնքի բնակիչներ	ապահովել է հրդեհների զերծ միջավայր, կանխվել են հրդեհավտանգ իրավիճակները	Սևանի թիվ 33 հրշեջ-փրկարարական ջոկատ, ԱՌԿ խորհուրդ
8	Տարհանման միջոցառումների ապահովման կազմակերպման պլանավորում, քարտեզների և սխեմաների կազմում	համայնք	համայնքի ղեկավար, համայնքապետարանի աշխատակազմի	կազմվել է տարհանման միջոցառումների պլան, առկա են	համայնքի ղեկավար ԱՌԿ խորհուրդ

			համապատասխան բաժիններ, մասնագետներ, ԱՌԿ խորհուրդ	համապատասխան քարտեզներ և սխեմաներ	
9	Շինարարական և այլ աղբի տեղափոխման վայրերի նախապես պլանավորում	արտոնագրված աղբավայր	համայնքի ավագանի	կանոնակարգվել են աղբի տեղափոխման գործընթացը, սահմանվել է համապատասխան գրաֆիկ և սխեմա	«Սևան համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» ՀՈԱԿ
10	Տրասնպորտային միջոցների հաշվառում, ինչպես նաև ճանապարհների, տրասնպորտային ենթակառուցվածքների վիճակի վերաբերյալ տվյալների պարբերական թարմացում, փոխադրումների պլանավորում քարտեզի վրա	համայնք	համայնքապետարանի աշխատակազմի համապատասխան բաժիններ	հաշվառված են համայնքում առկա տրանսպորտային միջոցները, թարմացվել են ենթակառուցվածքների վերաբերյալ տվյալները	համայնքի ղեկավար, աշխատակազմի ճարտարապետա-շինարարական և ֆինանսատնտեսագիտ ական բաժինների պետեր
11	Առաջին օգնության պլանավորում	«Սևանի բժշկական կենտրոն» ՊՈԱԿ	ԱՌԿ խորհուրդ, «Սևանի բժշկական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրինություն	պլանավորված է առաջին բուժօգնության աշխատանքները	ԱՌԿ խորհուրդ, «Սևանի բժշկական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն, առաջին բուժօգնության ծառայություն
12	Բժշկական սպասարկման պլանավորում, բժշկական հաստատությունների հետ համագործակցության կազմակերպում, տուժածների և մահացածների հաշվառման համակարգի ներդնում, տարհանման բժշկական միջոցառումների ապահովում	«Սևանի բժշկական կենտրոն» ՊՈԱԿ, համայնքապետարան	ԱՌԿ խորհուրդ, «Սևանի բժշկական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրինություն	իրականացվել է համագործակցային աշխատանք բժշկական հաստատության հետ, ներդրվել է հաշվառման համակարգ	ԱՌԿ խորհուրդ, «Սևանի բժշկական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն
13	Աղետի ժամանակ բնակչությանը խմելու ջրով և պարենամթերքի ապահովելու նպատակով համապատասխան պլանների մշակում՝ ներառելով՝ ջրի և պարենամթերքի ձեռք բերման աղբյուրներն ու եղանակները, դրանց տեղափոխումների հետ կապված փոխադրումների պլանավորումը, բաշխման կետերի ծավալման և բաշխման գործընթացների նախատեսումը	համայնք	«Վեոլիա Ջուր» ընկերության Սևանի մ/ճ-ի, Հացի գործարանի, հացի արտադրամասերի, առևտրի սրահների տնօրեններ, փոխադրամիջոցների սեփականատերեր, համայնքապետարանի աշխատակիցներ	մշակվել են բնակչությանը խմելու ջրով և պարենամթերքով ապահովելու պլանները, հստակեցված են դրանց ձեռքբերման աղբյուրները և եղանակները, կազմվել են փոխադրումների գրաֆիկը, հստակեցված են բաշխման կետերը	ԱՌԿ խորհուրդ, մասնագիտացված կազմակերպություններ ի, արտադրամասերի ձեռնարկությունների տնօրեններ
14	Կոմունալ-էներգետիկ, տրանսպորտային հաղորդակցության, կապի օբյեկտների արագ վերականգնման, վերանորոգման կամ	համայնք	«Սևան համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում», ՀԷՑ	իրականացվել են անհրաժեշտ կազմակերպչական ու	ԱՌԿ խորհուրդ, համապատասխան ընկերությունների,

	ժամանակավոր փոխարինման ուղղությամբ իրականացվող կազմակերպչական ու գործնական միջոցառումների պլանավորում		ՓԲԸ, «Գեղամա» մ/ճ Սևան տեղամաս, «Յուքոմ», «Բիլայն», «Վիվասել» կապի օպերատորներ	գործնական միջոցառումներ	պատասխանատուների տնօրեններ
15	Հիմնանորոգվող հասարակական շինությունների, ենթակառուցվածքների սեյսմակայունության ապահովում	համայնք	համայնքապետարան, շինարարական կազմակերպությունների ղեկավարներ	իրականացվել են սեյսմակայունությանն ուղղված աշխատանքներ	համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետա-շինարարական բաժին, շինարարական կազմակերպությունների ղեկավարներ
16	Քարաթափման հատվածների մասնագիտական զննում, քարտեզագրում, հնարավորության դեպքում իրականացնել արհեստական քարաթափում	համայնքի Գոմաձոր-Ցամաքաբերդ թաղամասերի տարածք	համայնքապետարան	վերահսկվում են քարաթափման վտանգները, իրականացված են կանխարգելիչ միջոցառումներ	ԱՌԿ խորհուրդ, համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետա-շինարարական բաժին
17	Ճանապարհների եզրերին հեղեղատների կառուցում և ճանապարհների բարեկարգում	ներհամայնքային ճանապարհներ /10 փողոց/	համայնքի բնակչություն	բարեկարգված, ասֆալտապատ, երթևեկի համար անվտանգ և ապահով ճանապարհների առկայություն	Սևան համայնքի ղեկավար, համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետա-շինարարական բաժին և շինարարական կազմակերպություններ
18	Սելավատարների մաքրում	համայնք	«Սևան համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում», «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի Սևան տեղամաս	մաքրված սելաֆատարների առկայություն	Սևանի համայնքապետարան, ԱՌԿ խորհուրդ
19	Համայնքի ԱՌԿ խորհրդի և մասնագիտացված խմբերի ղեկավարների ուսուցման և վերապատրաստման ներգրավում՝ մասնագիտացված կառույցների կողմից կազմակերպվող դասընթացներին և սեմինարներին	Երևան	ԱՌԿ խորհրդի անդամ	մասնակցություն դասընթացներին, անհրաժեշտ գիտելիքների ձեռքբերում	ԱՌԿ խորհրդի անդամներ, մասնագիտացված կառույցներ
20	Կրթություն չստացող երեխաների բացահայտում, դպրոցում ուսումնական գործընթացի շարունակության ապահովում	համայնք	հանրակրթական դպրոցների տնօրեններ, ուսուցումից դուրս մնացած երեխաներ, ծնողներ	բացահայտվել են կրթությունից դուրս մնացած երեխաները, առկա է տվյալների բազա	համայնքապետարանի աշխատակազմի ԿՄՍԵՀ բաժին, դպրոցների տնօրեններ

21	Հրդեհաշիջման վարժանքի կազմակերպում և իրականացում	Սևանի թիվ 1 «Բողբոջ» մանկապարտեզ	տնօրեն, աշխատակիցներ, երեխաներ, Սևանի թիվ 33 հրշեջ-փրկարարական ջոկատ	կազմակերպվել է հրդեհաշիջման վարժանք, ձեռք են բերվել անհրաժեշտ հմտություններ	Սևանի համայնքապետարան, Սևանի թիվ 33 հրշեջ-փրկարարական ջոկատ
22	Համագործակցություն մարզային փրկարարական վարչության հետ	համայնք	Սևանի թիվ 33 հրշեջ-փրկարարական ջոկատ, համայնքապետարան	առկա է համագործակցված աշխատանք	ԱՌԿ խորհուրդ
23	Համագործակցություն մարզային ոստիկանության հետ	համայնք	Ոստիկանության Սևանի բաժին, համայնքապետարան	առկա է համագործակցված աշխատանք	ԱՌԿ խորհուրդ
24	Համագործակցություն մարզային բուժ. Հաստատությունների հետ	համայնք	«Սևանի բժշկական կենտրոն» ՊՈԱԿ, համայնքապետարան	առկա է համագործակցված աշխատանք	ԱՌԿ խորհուրդ
25	Համագործակցություն համայնքում ակտիվ բոլոր մարդասիրական կազմակերպությունների հետ	համայնք	բարեգործական կազմակերպություններ, համայնքապետարան	առկա է համագործակցված աշխատանք	ԱՌԿ խորհուրդ
26	Տեղեկատվության փոխանակում	համայնք	համայնքապետարան, համայնքում գործող կազմակերպություններ, ընկերություններ, հաստատություններ, ՀԿ-ներ	անհրաժեշտ տեղեկատվության առկայություն և օգտագործում ըստ անհրաժեշտության	համայնքի ղեկավար, ԱՌԿ խորհուրդ
27	Համայնքի սեյսմիկ ռիկսի գնահատման տեխնիկական առաջադրանքի հաստատում	համայնքապետարան	համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետա-շինարարական բաժին և աշխատակազմ	առկա է հաստատված սեյսմիկ ռիսկի գնահատման տեխնիկական առաջադրանք,	ՀՀ ԱԻ նախարարության հետ և համայնքի ղեկավար
28	Համայնքի աղետների ռիսկի կառավարման շտեմարանի կազմում	համայնքապետարան	համայնքապետարանի աշխատակազմ, ԱՌԿ խորհուրդ, համայնքում գործող կազմակերպություններ, հաստատություններ, ընկերություններ	առկա է աղետների ռիսկի կառավարման շտեմարանի նախնական տարբերակը	համայնքապետարան